

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վերաբեկ հարաբերություններ -ին

« ԲԱՂԱՔԱՅԻ

Գրիգոր Արթուրյան -ից

(դիմողի անուն, ազգանուն)

Փ. Արթուրյան, Քարապետ 12-21

091596235, grigoryezitsyan@apq.am

(ընտանիքի վայր, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե)

հայաստանի Հանրապետության ՀՀ

211. 171. 05243

(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)


ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել « Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին
կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Պիճուճ
2. Կապճ. կապճ. պերճալուճ Գրաճեղճաճ հաճճաճ
3. Աճիճաճ քննճկաճ
4. Իճճաճաճաճ
5. Խաճիճաճ վերճաճաճաճ
6. _____


Դիմող՝



Գրիգոր Արթուրյան

« 29 »

19



17

1998-01-01
1998-01-01
1998-01-01

0311 087153

2108 21080000 21080000

2108 21080000 21080000


2108 21080000

23-12-0977

8994 9977

07 21080000

21080000



[Signature]

21080000 21080000

0311 087153

2108 21080000

2108 21080000 21080000

2108 21080000 21080000

2108 21080000 21080000

2108 21080000 21080000

2108 21080000 21080000

2108 21080000 21080000



21080000

Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ-ն իր 10-ամյա գործունեության ընթացքում իրականացրել է ավելի քան 300 ծրագիր հետևյալ ոլորտներում՝ ակտիվ քաղաքացիություն, ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, կայուն զարգացում, միջմշակութային երկխոսություն, գեղերային հավասարություն, շրջակա միջավայրի պահպանություն, սոցիալական ձեռնարկատիրություն և այլն:

Վերջին 2 տարվա ընթացքում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

«STEP» զբաղվածության դպրոց (01/06/2019-30/10/2019)

Ծրագիրը խոցելի խմբերի աշխատանքային հմտությունների զարգացմանն ու աշխատաշուկայում վերջիններիս մրցունակության բարձրացմանը նպատակաուղղված հնգամսյա ծրագիր էր: Ծրագրի ընթացքում 60 երիտասարդներ մասնակցել են կարողությունների և հմտությունների զարգացման ինտենսիվ դասընթացների, որն էլ դարձրել է նրանց ավելի մրցունակ հայաստանյան աշխատաշուկայում:

Դպրոցն իրականացվել է Արևելյան Գործընկերության Զաղաքացիական Հասարակության ֆորումի ֆինանսավորմամբ՝ «խոցելի խմբերի ներգրավվածությունը Արևելյան գործընկերության երկրներում» (STEP), ծրագրի շրջանակներում: «խոցելի խմբերի ներգրավվածությունը Արևելյան գործընկերության երկրներում» ծրագիրն իրականացվում է «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի կողմից, «National Youth Council of Moldova» և «Youth Alliance» (AISI) կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

«Գտի՛ր գործ, ստեղծի՛ր գործ» կարիերայի և ձեռնարկատիրության դպրոց (01/05/2019 – 30/09/2019)

2019թ.-ի մայիսից սեպտեմբեր ամիսների ընթացքում կարիերայի և ձեռնարկատիրության դպրոցները համախմբեցին Երևանում և հարակից քաղաքային ու գյուղական համայնքներում բնակվող 60 սիրիահայերի և տեղաբնակ անձանց:

Դպրոցները նպատակ էին հետապնդում ծանոթացնել մասնակիցներին Հայաստանի ձեռնարկատիրական ոլորտի և դրան վերաբերող օրենսդրության առանձնահատկություններին, ինչպես նաև Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատկություններին և գործատուների հիմնական պահանջներին:

Ծրագրի ընթացքում մասնակիցները խմբային դասընթացների, քննարկումների, գործնական վարժությունների, ինչպես նաև դասընթացավարների կողմից անհատական խորհրդատվությունների միջոցով ձեռք բերեցին բազմաթիվ հմտություններ աշխատաշուկայում ու ձեռնարկատիրական ոլորտում առավել ներգրավված և մրցունակ լինելու համար:

Ծրագիրն իրականացվել է «Հայ առաջադեմ երիտասարդություն» 34 -ի կողմից, «Action Against Hunger» միջազգային մարդասիրական կազմակերպության հետ համագործակցությամբ, ԳՄՀԸ (GIZ) -ի աջակցությամբ իրականացվող EPIC ծրագրի շրջանակներում:

«Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» (EPIC) ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ:

«Փոփոխությունների ալիք. Ուսանողական ակտիվիզմի խթանումը Հայաստանում» (01/05/2018-25/10/2019)

Ծրագրի նպատակն էր՝ նպաստել ուսանողների մասնակցության բարձրացմանը կրթական բարեփոխումներին, խթանել կրթության որակի նկատմամբ նրանց պահանջի ձեւավորումը և աջակցել ակտիվ ուսանողների նախաձեռնություններին:

Ծրագրի արդյունքում՝

- 200 երիտասարդ ուսանողներ ներգրավվեցին ուսանողների կողմից կազմակերպված ծրագրերում և շահերի պաշտպանության արշավներում:
- 500 ուսանող ներգրավվեց ծրագրի տարբեր գործողություններում:
- Մասնակից 30 ուսանողները կիրառեցին իրենց գիտելիքները գործնականում, ինչը նպաստեց ուսուցման գործընթացի արդյունավետության ուժեղացմանը:
- Իրականացվեցին առնվազն 6 ներբուհական և միջբուհական ուսանողական նախաձեռնություններ:
- Մշակվեց հստակ առաջարկությունների փաթեթ և ներկայացվեց պետական կրթական քաղաքականության պատասխանատուներին և որոշում կայացնողներին:
- Փորձագիտական զրույցների և ուսումնական այցի շրջանակներում, մասնակից ուսանողները կապեր և համագործակցություն ձեռք բերեցին Չեխիայի, Լեհաստանի եւ Սլովակիայի ակտիվ ուսանողների, համալսարանների, դասախոսական կազմի և ուսանողական կազմակերպությունների հետ:

Ծրագիրն իրականացվել է Կիշեգրադ միջազգային հիմնադրամի և Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ, Մատեյ Բելի համալսարանի (Սլովակիա), Միջազգային ծրագրերի ասոցիացիայի (Լեհաստան), Բրեցլավի եվրոպական երիտասարդական կենտրոնի (Չեխիա) և Youthfully Yours երիտասարդական կազմակերպության (Սլովակիա) հետ համագործակցությամբ:

**«Երիտասարդ ձեռներկատերերը հանուն համայնքի զարգացման» ծրագիր
(01/12/2018-10/10/2019)**

Ծրագրի նպատակն էր զարգացնել Վրաստանի, Հայաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի մարզինալացված, գյուղական և անապահով շրջանների երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունները և հարստացնել բիզնես պոտենցիալի մասին գիտելիքները՝ համագործակցելով Իտալիայի և Իսպանիայի գործընկեր կազմակերպությունների հետ:

Նախագծին մասնակցել են 15-19 տարեկան 700 երիտասարդներ վերոնշյալ երկրների ընտրված գյուղական տարածքներից, ովքեր մասնակցել են սեմինարներին՝ ուղղված երիտասարդների ձեռնարկատիրական պոտենցիալի, քննադատական մտածողության և համակարգչային հմտությունների զարգացմանը: Այս սեմինարների ընթացքում օգտագործվել են նորարական ոչ ֆորմալ մեթոդներ, որոնք ստեղծվել են պրոֆեսիոնալ երիտասարդ գործիչների կողմից ծրագրի ընթացքում:

Ծրագիրը ներառում էր հետևյալ միջազգայնացումները՝ անդրազգային նախապատրաստական հանդիպում, ձեռնարկատիրական կրթության ոլորտում երիտասարդության կարիքների հետազոտություն, որը իրականացվել է մասնակից երկրների ընտրված շրջաններում, երիտասարդ գործիչների համար դասընթաց, երիտասարդության համար ձեռնարկատիրական կրթության տեղային սեմինարներ, երիտասարդական փոխանակման նախագիծ, որը ներառել է 60 երիտասարդների 6 մասնակից երկրներից, տեղային կոնֆերանսներ պետական ներկայացուցիչների, ձեռներեցիների և երիտասարդների միջև, և ծրագրի գնահատման հանդիպում:

Նախագիծը կոորդինացվել է Վրաստանի «AISI Youth Alliance»-ի կողմից՝ համագործակցելով հինգ երկրների կազմակերպությունների հետ՝ «Poruch» (Ուկրաինա), «Creatori» (Մոլդովա), «Polaris» (Իտալիա), «ADEFIS Juventud International» (Իսպանիա) և «Հայ Առաջադեմ Երիտասարդության» (Հայաստան):

«Երիտասարդ ձեռներկատերերը հանուն համայնքի զարգացման» նախագիծը ներկայացնում է երիտասարդների կարողությունների զարգացումը. «Eastern Partnership Youth Window» նախագիծերը համաֆինանսավորվում են Եվրոպական հանձնաժողովի «Erasmus+» ծրագրի շրջանակներում:

“Building bridges, breaking walls, managing refugee crisis in Europe” ծրագիր (20-28/11/2018, 18-23/02/2019)

Ծրագրի շրջանակներում 35 ուսանողներ, երիտասարդ աշխատողներ, ակտիվիստներ 15 տարբեր երկրներից հանդիպեցին Հայաստանի մայրաքաղաք Երևանում: “Building bridges, breaking walls, managing refugee crisis in Europe” դասընթացի թեման էր արտագաղթը, փախստականների ներկայիս իրավիճակը Եվրոպայում և ինչպիսի մեթոդներ գոյություն ունեն ինտեգրումը ապահովելու համար: Ծրագիրը կազմված էր 2 փուլից, որի առաջին մասը իրականացվեց Երևանում և ռաումնական այցը 2019թ.-ի փետրվարին Ստոկհոլմում:

Երկու փուլով իրականացվող նախագիծը Շվեդիայի և APY-ի հյուսիսարևելյան սփյուռքի ֆորումի համագործակցությունն է, որը ֆինանսավորվում է Շվեդիայի ազգային գործակալության կողմից:

«ՄասնակցումեՆԸ» սոցիալական ձեռնարկատիրության և ակտիվ քաղաքացիության ծրագիր (01/09/2017-25/09/2018)

Ծրագրի նպատակն էր խրախուսել երիտասարդների կողմից սոցիալական ձեռնարկատիրությունների ստեղծումը և ակտիվ մասնակցությունը համայնքի կյանքին՝ դասընթացների, մասնագիտական պրակտիկաների և քննարկումների միջոցով: Ծրագրին մասնակցել են ՀՀ 10 մարզերում բնակվող 18-ից 28 տարեկան 60 երիտասարդներ: Ծրագրի շրջանակներում ընտրված մասնակիցները հնարավորություն են ունեցել մասնակցելու «Ակտիվ քաղաքացիություն» և «Սոցիալական ձեռնարկատիրություն» դպրոցներին, ինչպես նաև՝ անցել են 2 շաբաթ տևողությամբ պրակտիկա հասարակական կազմակերպություններում կամ սոցիալական ձեռնարկատիրություններում:

Ծրագիրը բաղկացած էր հետևյալ փուլերից՝

- Ակտիվ քաղաքացիության դպրոց
- Սոցիալական ձեռնարկատիրության դպրոց
- 2 շաբաթ տևողությամբ պրակտիկա
- Երիտասարդական ֆորում

«ՄասնակցումեՆԸ» սոցիալական ձեռնարկատիրության և ակտիվ քաղաքացիության ծրագիրն իրականացվել է «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի կողմից «Դիվիզանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ի և «Կայուն զարգացման և ակտիվ քաղաքացիության ԷկոԼաբ հիմնադրամ»-ի հետ համատեղ: Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից և իրականացվել է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի փոքր դրամաշնորհային նախագծի շրջանակներում:

«Կարևոր է յուրաքանչյուրը. Հայաստանի գյուղական համայնքների երիտասարդների զորացման» ծրագիր (01/10/2017-30/10/2019)

Ծրագրի խթանեց համայնքային կյանքում ՀՀ մարզերի գյուղական եւ քաղաքային համայնքներում բնակվող 16-25 տարեկան երիտասարդների քաղաքացիական մասնակցության և ներգրավվածության մակարդակի բարձրացումը և արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ կարողությունների զարգացումը:

Ծրագրի շրջանակներում երիտասարդների և երիտասարդական ոլորտի մասնագետների հետ հարցման արդյունքում մշակված, փաստերի և կարիքի վրա հիմնված՝ դասընթացներ իրականացվեցին ՀՀ գյուղական և մարզերի քաղաքային համայնքներում: Ծրագրի արդյունքում աճեց գյուղական և մարզերի քաղաքային համայնքների, ինչպես նաև

**ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԿ
ԳՐԻԳՈՐ ԵՐԻՏՅԱՆ**

սակավ հնարավորությունների ունեցող երիտասարդության ներգրավվածությունը և մշակվեց ներառականության խթանմանն ուղղված առաջարկությունների փաթեթի:

«Կարևոր է յուրաքանչյուրը» Հայաստանի գյուղական համայնքների երիտասարդների զորացման ծրագրի շրջանակում կազմակերպված Միջազգային Երիտասարդական Ֆորումը նպատակ էր հետապնդում ամփոփել ծրագրի գործունեությունը, և ծրագրի ընթացքում իրականացված երիտասարդների հարցումը, երիտասարդական աշխատողների հետ ըննարկումների արդյունքում մշակված մեթոդաբանական ձեռնարկի և առաջարկությունների փաթեթը ներկայացվեց ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թթ. Ռազմավարության մշակմանն ընդառաջ:

Ծրագիրն իրականացվել է Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ-ի կողմից, Հասարակական նախաձեռնությունների ինստիտուտ (Ուկրաինա) և Մոլդովայի առաջխաղացման հիմնադրամ (Մոլդովա) ՀԿ-ների հետ համագործակցությամբ:

Ծրագիրը ֆինանսավորվել է Արևելյան գործընկերության Զաղաքացիական հասարակության ֆորումի (ԱԳ ԶՀՖ) վերագրանտավորման նախագծի կողմից:

**ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԿ
ԳՐԻԳՈՐ ԵՐԻՏՅԱՆ**

Հիմնավորում հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ

Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ-ն Հայաստանում ակտիվ երիտասարդական գործունեություն ծավալող առաջատար հասարակական կազմակերպություններից մեկն է: Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ-ն պաշտոնապես հիմնադրվել է 2009 թ.-ին Երևանում մի խումբ երիտասարդների կողմից, որոնց ուղիները խաչվեցին համատեղ նախաձեռնության իրականացման ճանապարհին: Այսօր այն վերածվել է մի մեծ կազմակերպության, որն իր շուրջն է համախմբում մի շարք տեղացի և միջազգային կամավորների, հազարավոր անդամների և հետևորդների, բազմաթիվ ուղղակի և անուղղակի շահառուների՝ Հայաստանից և ողջ Եվրոպայից:

Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ-ն շահույթ չիետապնդող, ոչ ամենօրյային կազմակերպություն է, որի նպատակն է աջակցել, ոգեշնչել և ներգրավել երիտասարդներին Հայաստանից և նրա սահմաններից դուրս՝ զարգացնելու իրենց սոցիալ-առաջնորդական հմտությունները, նպաստելու քաղաքացիական պատասխանատվության բարձրացմանը և ուղղորդելու գործել որպես փոփոխություն իրականացնողներ: Կազմակերպության նպատակներն են՝

- Ակտիվ քաղաքացիության և երիտասարդության մասնակցության խթանում նպաստելով ժողովրդավարական արժեքների և սկզբունքների ընկալմանը,
- Երիտասարդների կարողությունների զարգացում, անձնային և մասնագիտական աճի ապահովում ոչ ֆորմալ կրթության և կամավորական ծրագրերի միջոցով,
- Երիտասարդական աշխատանքի զարգացում և ճանաչելիություն, ինչպես նաև Հայաստանում ոչ ֆորմալ կրթության և կամավորության խթանում,
- Երիտասարդների ոչ ֆորմալ և ֆորմալ կրթական հնարավորությունների խթանում երիտասարդական աշխատանքում թափանցիկության ապահովման միջոցով,
- Կրթական և միջմշակութային փոխանակման ամրապնդում ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս,
- Զաղաքացիական հասարակության զարգացման խթանում և այդ գործընթացում երիտասարդների ներգրավվածության ապահովում:

Կազմակերպությունն 10 տարվա փորձ ունի ոչ ֆորմալ կրթության, երիտասարդական քաղաքականության, կամավորության, ՉԼՄ-ների, գենդերային հավասարության, շրջակա միջավայրի պահպանության, ակտիվ քաղաքացիական մասնակցության, մարդու իրավունքների պաշտպանության և երիտասարդական աշխատանքի ոլորտներում:

Կազմակերպությունը ավելի քան պատրաստակամ է ներդնել իր ողջ ներուժը խորհրդի կայացման գործընթացում, ինչպես նաև աջակցել տարբեր ռեսուրսներով խորհրդի արդյունավետ գործունեությունը ապահովելու համար:

Կազմակերպությունը կարող է տրամադրել տարբեր հետազոտությունների արդյունքներ, որոնք իրականացրել է հենց կազմակերպությունը տարբեր ծրագրերի շրջանակներում, որը ամբողջական պատկեր կարող է տալ երիտասարդության ներկայիս իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև երիտասարդական ոլորտում երկար տարիների փորձի արդյունքում կա հստակ մշակված գործիքակազմ երիտասարդների մասնակցայնության բարձրացման վերաբերյալ:

Կազմակերպությունը ունի սերտ համագործակցություն Հայաստանյան և միջազգային մի շարք երիտասարդական կառույցների հետ, որոնց հետ մշակվել և իրականացվել են երիտասարդների մասնակցայնությանը, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը, սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքացիական ինտեգրմանը միտված ծրագրեր:

Կազմակերպությունը հարուստ է մարդկային ռեսուրսներով՝ աշխատակիցներ, ոլորտի մասնագետներ, փորձագետներ և այլն, որոնք ունեն բավականին մեծ փորձառություն երիտասարդական ոլորտում և տիրապետում են հենց երիտասարդական ոլորտի ներկայիս խնդիրներին: Վստահ ենք, որ համագործակցության և միասնական ուժերի ներդրման շնորհիվ հնարավոր է լուծումներ առաջարկել, և ոչ միայն առաջարկել, այլ նաև հստակ քայլեր անել խնդիրների լուծմանը միտված:

Կազմակերպության խորհրդի անդամները ակտիվ մասնակցություն են ունեցել երիտասարդական քաղաքականության, ռազմավարական ուղղությունների մշակման, ինչպես նաև կամավորության օրենքի մշակման և ներկայացման գործընթացում, որը կարծում ենք այս պահին առաջնային կարևորություն ունեցող հարցերն են:

Մենք հավատում ենք, որ առաջադեմ, կրթված, հմուտ, աշխատունակ և լայն մտահորիզոն ունեցող երիտասարդները տիրապետում են բոլոր իրավունքներին և միջոցներին՝ դառնալու փոփոխություն իրականացնողներ՝ Հայաստանում և նրա սահմանից դուրս: Մեր տեսլականն է, ունենալ այնպիսի հասարակություն, որտեղ երիտասարդները հասնելու են իրենց ամբողջական ներուժին և դառնալու են աշխատունակ և պատասխանատու քաղաքացիներ: Երիտասարդությունը ապագան չէ, այլ՝ ներկան:

Երիտասարդության բնագավառում նախարարության գործունեության հակիրճ վերլուծություն և առաջարկներ

Արդյունավետ երիտասարդական քաղաքականությունը պահանջում է փոխկապակցված, համակողմանի և միջսեկտորալ ռազմավարության զարգացում, որը արդյունավետ կերպով կգործի հանրային կյանքի բոլոր ոլորտներում: ԿԳՄՍ նախարարության կողմից մշակվող և իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը և դրա ռազմավարությունը պետք է ոչ միայն ունենան հստակ առաջնահերթություններ, այլև նաև հստակ գործողությունների պլան և ցուցիչներ՝ ակնկալվող և ստացված արդյունքները չափելու և գնահատելու համար: Այս չափանիշների տեսանկյունից 2017-2022 պետական երիտասարդական քաղաքականության նախագիծը ունի լուրջ թերություններ:

ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագիրը որպես երիտասարդության ոլորտում առաջնահերթ նպատակ նախատեսում է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երիտասարդները կկարողանան լիարժեք ինքնադրսևորվել: Այս նպատակի իրականացումը հնարավոր կլինի միայն ներառական երիտասարդական քաղաքականության ռազմավարության պայմաններում, որը կլինի բոլոր երիտասարդների համար և կարծազանքի երիտասարդների տարբեր խմբերի կարիքներին:

Այս առումով երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը պետք է ունենա պարտավորություն լիարժեք հնարավորություններ ընձեռնելու տարբեր ազգային և կրոնական խմբերի պատկանող երիտասարդների, երիտասարդ կանանց և սոցիիկների, գյուղաբնակ երիտասարդների, երիտասարդ փախստականների, հաշմանդամություն ունեցող երիտասարդների, սոցիալապես անապահով և հակամարտությունների գոտում ապրող երիտասարդության ներգրավման և զարգացման համար: Երիտասարդական քաղաքականությունը պետք է ուղղված լինի բոլոր երիտասարդների կարիքներին՝ լինելով ներառական և զերծ մնալով «Ելիտար» բնույթ կրելուց:

Երիտասարդները Հայաստանի առավել դինամիկ հատվածն են՝ ամենամեծ պոտենցիալ ունեցող մարդկային ռեսուրսը: Երիտասարդների ստեղծագործական էներգիան և նորարարության խթանումը անհնար է, եթե չկա դրանով զբաղվող գերատեսչություն կամ պետական գործակալություն: Երիտասարդներին վերաբերող հարցերի շրջանակը շատ ավելին է, քան կրթությունը, զբաղվածությունը կամ առողջապահությունը, հետևաբար կարևոր է երիտասարդության հարցերի հոլիստիկ ընկալումը և համապատասխանաբար հոլիստիկ, համակողմանի երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Այս առումով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Սպորտի և Երիտասարդության նախարարությունը միացավ Կրթության, Գիտության և Մշակույթի նախարարությանը, ինչը երիտասարդական ոլորտի փորձագետների մոտ առաջացրեց անհանգստություն: Նախատեսված բարեփոխումները անշուշտ անհրաժեշտ էին ՀՀ պետական համակարգի արդյունավետ աշխատանքի և լավ կառավարման համար: Այնուամենայնիվ, օպտիմալացման այս համատեքստում շարունակում է անորոշ մնալ, թե ինչպես է ԿԳՄՍ-ը պատասխանատու ՀՀ երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև երիտասարդության հարցերի համար և արդյո՞ք այս թեմաները գտնվում են նախարարության գերակայությունների շարքում:

Այսօր, երբ հեղափոխությունից հետո Հայաստանում ստեղծվել է երիտասարդների սոցիալական, քաղաքական, տնտեսական և մշակութային մասնակցության աննախադեպ հնարավորություն, կարևոր է ձևավորել երիտասարդական քաղաքականությունը և երիտասարդներին վերաբերող հարցերը համակարգող պետական պատասխանատու գերատեսչություն, որը կարող է իր կարևոր տեղը ունենալ թե՛ Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի, թե՛ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններում:

Պետական մակարդակով երիտասարդության հարցերի համակարգումը և երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումը կարևոր է մի շարք պատճառներով՝

1. Երիտասարդների հարցերով զբաղվող պետական գործակալության առկայությունը պետության կողմից երիտասարդների սոցիալական, տնտեսական, քաղաքական, քաղաքացիական և մշակութային ներուժի իրացմանն ուղղված աշխատանքների համակարգումն ու իրականացումն է:

2. Ժողովրդավարական երկրներում երիտասարդները պետք է հնարավորություն ունենան իրենց ձայնը անմիջականորեն լսելի դարձնել իրենց վերաբերող և չվերաբերող քաղաքականությունների մշակման և որոշումների ընդունման գործընթացներում: Երիտասարդության հարցերի համար պատասխանատու գերատեսչության հիմնական գործառույթը պետք է լինի երիտասարդների փորձառությունների և կարծիքների ներառումը որոշումների կայացման գործընթացներում՝ ապահովելով մասնակցային և ներառական որոշումների կայացում և քաղաքականությունների մշակում:

3. Կենսագործունեության տարբեր ոլորտներում ընդգրկված երիտասարդները պետք է հնարավորություն ունենան համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմների և հարթակների միջոցով արտահայտեն իրենց մոտեցումները, թե որովք պետք է լինեն երիտասարդներին ուղղված կառավարության առաջնահերթությունները:

4. Առանց Երիտասարդության հարցերի համար պատասխանատու գերատեսչության անհայտ է, թե ո՞ր պետական կառույցն է համակարգում երիտասարդների բարեկեցությանն ուղղված պետության ջանքերը և ո՞վ է պատասխանատու երիտասարդներին ամօժվող օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի մշակման համար, ո՞ր մարմինն է իրականացնում երիտասարդների զարգացմանն ու կատարելագործմանը ուղղված պետական նպատակային ծրագրեր և, ի վերջո, ո՞վ է ներկայացնում երիտասարդների ձայնը և շահերը քաղաքականությունների մշակման գործընթացում:

5. Երիտասարդների մասին օրենքի և երիտասարդների աջակցության սխեմաների բացակայության, Վարչապետին կից երիտասարդական խորհրդի փաստացի չգոյության և Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի աշխատանքների փաստացի դադարեցման, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի անարդյունավետ աշխատանքի և ՀՀ մարզերում, քաղաքներում և գյուղերում երիտասարդական քաղաքականության և համապատասխան բյուջեի բացակայության, նպատակային ՊՈԱԿ-ների փակման պայմաններում, երիտասարդների հարցերով զբաղվող պետական գերատեսչության օպտիմալացումը և դրա կարևորության մակարդակի իջեցումը նախարարությունից վարչության կամ կոմիտեի, կամ առհասարակ նման կառույցից հրաժարվելը վերջին հարվածն էր երիտասարդության ոլորտին և այս բնագավառում աշխատող ոչ պետական կազմակերպություններին:

6. Երիտասարդների հետ աշխատող գերատեսչության բացակայությունը հստակ մեսիջ է երիտասարդներին, որ նրանք պետության համար այլևս գերակայություն չեն: Մի շարք երկրներում այս գերատեսչության օպտիմալացումից հետո քննարկվում է դրա վերաբացման հարցը (Ավստրալիա, Մեծ Բրիտանիա): Իսկ օրինակ Կանադայում պետության հանձնառությունը երիտասարդների նկատմամբ ընդգծելու համար, Կանադայի վարչապետը նաև միջգերատեսչական հարաբերությունների և երիտասարդների հարցերով նախարարն է:

7. Երիտասարդության հարցերը համակարգող գերատեսչության բացակայության պայմաններում պարզ չէ, թե ով է զբաղվելու Հայաստանում կամավորական աշխատանքի և ոչ ֆորմալ ուսուցման խթանմամբ, երիտասարդական աշխատանքի հանրայնացմամբ և զարգացմամբ, երիտասարդական աշխատողի ինստիտուտի՝ կայացմամբ և երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Այս խնդիրները երբևէ չեն եղել միավորվող նախարարությունների օրակարգում և, հետևաբար, այս գործընթացը բացասաբար կանդորդառնա նշված ոլորտների զարգացման վրա:

8. Երիտասարդների հարցերը միջգերատեսչական են և ակնհայտ է, որ դրանց անդրադառնում են տարբեր նախարարություններ: Այնուամենայնիվ, մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ երիտասարդների հարցերի ներառումը առանձին գերատեսչություններում արդյունավետ չէ:

Երիտասարդների հզորացումն ու զարգացումը Հայաստանում այլընտրանք չունեն, սակայն այս գործընթացը պահանջում է ժամանակ, ռեսուրսներ և լավ ռազմավարություն: Լյա հարցերի շրջանակը չպետք է դրվի կառավարության տարբեր գերատեսչությունների պատասխանատվության տակ, քանի որ արդյունքում ծախսվելու են լրացուցիչ միջոցներ նամանատիպ կամ նույն ջանքերի համար, իսկ արդյունքը լինելու է անբավարար: Սա այն կարևոր պատճառներից մեկն է, թե ինչու է կարևոր պատասխանատու գերատեսչության առկայությունը, որը համակարգում է ինչպես երիտասարդության ոլորտը, այնպես էլ երիտասարդության հարցերի շուրջ միջգերատեսչական համագործակցությունը:

9. Չնայած նախորդ կառավարությունները այս ոլորտում ձեռնարկել են որոշակի, թեև ոչ բավարար միջոցներ, երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության իրականացումը եղել է թույլ և ոչ արդյունավետ: Այժմ բացառիկ հնարավորություն է ստեղծվել կյանքի կոչել մի շարք նորարարական ծրագրեր, ստեղծել երիտասարդների աջակցման սխեմաներ և կատարելագործել նախկինում ստեղծված, բայց ոչ արդյունավետ օգտագործված գործիքները:

Երիտասարդները Հայաստանի շարժիչ ուժն են, նորարարական գաղափարների գեներացողը, երկրի տնտեսական զարգացման ռեսուրսը, Հայաստանի ներկան ու ապագան: Երիտասարդները Հայաստանին նվիրեցին թավշյա հեղափոխությունը և ստանձնեցին հեղափոխական արժեքների տարածման և պահպանման պատասխանատվությունը: Երիտասարդները առնվազն արժանի են ունենալ իրենց հարցերով զբաղվող պետական մարմին:

Ներկայացնում ենք մի քանի առաջարկներ, թե ինչի վրա պետք է կենտրոնան ԿԳՄՍ նախախարությունը առաջիկա մի քանի տարիներին:

Գեռականություն 1.

Երիտասարդների հասարակական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցության մակարդակի բարձրացում

1. Խրախուսել կրթական հաստատություններին ստեղծել նպաստավոր միջավայր երիտասարդության քաղաքական և քաղաքացիական մասնակցության համար:
2. Դրամաշնորհային ծրագրերը դարձնել ավելի նպաստավոր ոչ միայն կայացած ՀԿ ներքի համար, այլ նաև երիտասարդական նախաձեռնությունների և լայն խմբերի համար:
3. Իրականացնել իրազեկման աշխատանքների այլ պետական գերատեսչություններում՝ իրագործելու հարկային ոլորտի բարեփոխումներ, որպեսզի ստեղծվի ավելի բարենպաստ հարկային համակարգ, որը կխրախուսի քիզնես սեկտորի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրականացմանը, մասնավորապես մարզային համայնքների քաղաքական և քաղաքացիական ակտիվությունը խթանող նախագծերի միջոցով:
4. Խրախուսել ՀԿ-ներին իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կխթանեն երիտասարդների քաղաքացիական ներգրավվածությունը:
5. Խթանել երիտասարդների կարիքների գնահատման պլատֆորմի ստեղծումը, որը կօգտագործվի երիտասարդների շրջանում ընդունվելիք օրենքների և ռազմավարությունների վերաբերյալ հարցումներ իրականացնելու համար:
6. Տեղական ինքնակառավարման մարմիններին խրախուսել ստեղծել այնպիսի համակարգ, որտեղ երիտասարդական խորհուրդները կստանձեն իրենց փիրավ դերը, որպես տեղական և ազգային քաղաքականությունների մշակման խորհրդատվական մարմիններ:

7. Զննարկել Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության հետ կամավորական աշխատանքի և կամավորական մշակույթի ներառման հնարավորությունները կրթական հաստատություններում: ԱՄՆ-ում և Եվրոպական մի շարք երկրներում բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողները դիպլոմի պաշտպանության իրավունք են ստանում, մասնագիտությամբ որոշակի ժամանակ հասարակական գործունեություն լրացրած լինելու դեպքում: Դա միանշանակ կնպաստի կամավորության մշակույթի զարգացմանն ու կամավորության ինստիտուտի ձևավորման գործընթացում երիտասարդների ներգրավմանը, որը կնպաստի նաև նրանց մասնագիտական փորձի ձեռք բերմանն ու աշխատանքային մրցունակության բարձրացմանը:

Գերակայություն 2.

Երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակում,

1. Ամրացնել հարաբերությունները համալսարանների և բիզնես սեկտորի միջև, մասնավորապես ստեղծելով փոխգործակցություն համալսարանային ֆակուլտետների և համապարասխան ձեռնարկատիրությունների միջև՝ նպաստելու ուսանողների հետազոտական նախագծերի վաճառքին, մասնագիտական պրակտիկա անցնելու հրարավորության ստեղծմանը և աշխատանքային տոնավաճառների իրականացմանը:

2. Իրականացնել աշխատաշուկայի պահանջների գնահատում և հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ թարմացնել համալսարանի ուսումնական պլանը՝ համապատասխանեցնելով այն աշխատաշուկայի պահանջներին:

3. Ավագ դպրոցի աշակերտների համար ընդլայնել մասնագիտական կողմնորոշման նախագծերի շրջանակը և հասանելիությունը՝ այցեր կազմակերպելով դեպի այն համալսարաններ, որտեղ նրանք պատրաստվում են ընդունվել և կազմակերպություններ, որտեղ կարող են ձեռք բերել իրենց ապագա մասնագիտությանն առնչվող փորձառություն:

4. Աջակցել կարիերայի կենտրոնների հիմնադրմանն ու տարածմանը, որոնք ժամանակ առ ժամանակ կվազմակերպեն աշխատանքային տոնավաճառներ, կարողությունների զարգացման դասընթացներ, ինչպես նաև կստեղծեն ոլորտի առաջատար կազմակերպություններում մասնագիտական պրակտիկա անցնելու հնարավորություններ:

5. Ավագ դպրոցի և համալսարանի դասացուցակներում ներառել «տնտեսագիտական գրագիտության» մակարդակի բարձրացումը խթանող առարկաներ:

6. Ստեղծել այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են երիտասարդների կողմից հիմնված սոցիալական ձեռնարկատիրությունների հարկերի նվազեցումը, կառավարության կողմից սուբսիդավորումը, երիտասարդների կողմից հիմնված տեղական ձեռնարկատիրությունների համար անվճար խորհրդատվությունը, գովազդի և ծառայությունների ու ապրանքի իրացման հարցում աջակցությունը:

7. Համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ վերանայել Չբաղվածության տարածքային կենտրոններում ներգրավված մասնագետների որակավորումները և կատարել համապատասխան որակյալ մասնագետների հավաքագրում, դրանց բացակայության դեպքում համապատասխան ծառայությունը պատվիրակել մասնագիտացված կազմակերպության, բաց, թափանցիկ, մրցութային ընթացակարգերով:

8. Հատուկ ուշադրություն դարձնել մարզերում գործող շքադավաճության տարածքային կենտրոնների աշխատանքներին և հավաքագրել երիտասարդ մասնագետների՝ կենտրոնների արդյունավետությունը ապահովելու նպատակով:
9. ՓՄՁ ՉԱԿ-երի միջոցով սոցիալական ձեռնարկատիրություններ ստեղծելու նպատակով երիտասարդներին տրամադրել 0%-ով վարկեր, իսկ առանձին դեպքերում գյուղատնտեսական գործունեության, կամ գյուղատնտեսական մթերքի վերամշակման արտադրության ուղղությամբ տրամադրել ստարտափի դրամաշնորհներ:
10. Իրականացնել իրազեկման աշխատանքներ համապատասխան գերատեսչությունների հետ՝ օրենքով սոցիալական ձեռներեցությունը ձեռներեցությունից տարբերակել համար և սահմանելու համապատասխան հարկային առավելություններ:
11. Վերանայել «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը, այն դարձնելով իրապես մատչելի՝ կանխավճարի առումով:
12. Նվազեցնել «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկի տոկոսադրույքը, որը այս պահին տրվում է 10.5 տոկոսով, որից պետությունը սուբսիդավորում է միայն 2 տոկոսը, իսկ ՀՀ մարզերում 6.5 տոկոսը:
13. «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրով ամուսինների գումարային տարիքը բարձրացնել 65-ից 70, իսկ երիտասարդ միայնակ ծնորի դեպքում 35-ից 40:

Գերակաություն 3.

Երիտասարդական աշխատանքի կայացում և հետագա զարգացում, երիտասարդների ցկյանս կրթության խրախուսում

1. Բաջալերել ոչ ֆորմալ կրթության ավելի լայն ճանաչումն ու տարածումը, մասնավորապես քաղաքացիական կրթության, ներառման, ժողովրդավարության, շրջակա միջավայրի հիմնխնդիրներ և այլ հիմնարար թեմանի վերաբերյալ: Կրթությունը պետք է որդեգրի թե՛ տեսական, թե՛ գործնական մեթոդներ՝ համադրելով ուսումնառությունը աշխատանքային փորձ ձեռք բերելու, կամավորության կամ պրակտիկայի հետ:
2. ԲՈՒՀ-երի և գործատուների հետ համագործակցության միջոցով՝ ոչ ֆորմալ կրթությունը կարող է խրախուսվել մասնագիտական կողմնորոշման ծրագրերի շնորհիվ՝ միաժամանակ համագործակցելով բիզնես սեկտորի և տեղական կազմակերպությունների հետ:
3. Ներդնել ավելի մեծ ռեսուրսներ ոչ ֆորմալ կրթության մասնագետների և երիտասարդական աշխատողների մասնագիտական վերապատրաստումներ իրականացնելու մեջ:
4. Իրանել մասնագիտական կրթության զարգացումը Հայաստանում և խրախուսել մասնավոր քոլեջների ստեղծումը տնտեսության այն ճյուղերում գործող խոշոր ձեռնարկությունների և կազմակերպություններին կից, որոնք առավել հզոր են, կայացած և համահունչ Հայաստանի Հեռանկարային զարգացման ռազմավարական ուղղություններին, կամ տնտեսությունում պահանջարկված, բայց կրթական ոլորտում բացակայող հատվածում:
5. ՀԿ-ների և կրթական կազմակերպությունների, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ ձևավորել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները վավերացնող գործիք:

6. Իրագործել 2015-ին ընդունված «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը» և «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» կառավարության որոշումները, որոնք մնացել են թղթի վրա:

7. Աշխատել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ «Կամավորական գործունեության մասին» օրենքի նախագիծի շուրջ, որի նպատակը կլինի Հայաստանի Հանրապետությունում կամավորականության խթանումը, զարգացումը և հանրայնորեն ճանաչելի դարձնելը: Օրենքի նախագծում ավելացնել կամավորության՝ որպես աշխատանքային փորձ ճանաչումը, ինչը որոշակի մասով կարող է լուծել երիտասարդների գործազրկության հարցը:

Գերակառուցում 4.

Միջազգային երիտասարդական համագործակցության, միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունության խրախուսում

1. Խրախուսել միջկառավարական երկխոսությունը երիտասարդության ոլորտում՝ ընդլայնելով փոխադարձ համագործակցությունը ԵՄ-ի և Արևելյան գործընկերության երկրների միջև:

2. Երկծողություն սկսել ՀՀ տարածքում գործող օտարերկրյա դեսպանատների հետ՝ պարզեցնելու վիզայի տրամադրման գործընթացը այն երիտասարդների և ուսանողների համար, ովքեր մասնակցում են երիտասարդական շարժունակության ծրագրերի:

3. ՀՀ մարզերում ստեղծել խորհրդատվական և համակարգող կենտրոններ՝ երիտասարդական շարժունության ծրագրերի ինֆորմացիոն աջակցության համար: Անհրաժեշտության դեպքում պատվիրակել այս գործառույթը ակտիվ տեղական երիտասարդական կազմակերպություններին:

4. Բանակցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կամավորական գործունեություն իրականացնելու համար ՀՀ գործուղված օտարերկրյա կամ ՀՀ քաղաքացիություն չունեցող սփյուռքահայ կամավորներին և իրենց հյուրընկալող կազմակերպություններին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից գանձվող մուտքի արտոնագրի վճարներից ազատելու հարցը, ինչպես նաև անվճար տրամադրել Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ և կացության քարտ՝ ազատելով պետական տուրքի վճարումից՝ կամավորական աշխատանքի պայմանագրի հիման վրա՝ առանց կամավորական ծրագիրը բարեգործական որակելու անհրաժեշտությունից Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնությունը կորոդինացնող լիազորված մարմնում:

5. Համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցության արդյունքում փոփոխություն կատարել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում կացության կարգավիճակի հետ կապված փաստաթղթեր տալու, Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր ձևակերպելու հետ կապված ծառայությունների համար պետական տուրքի վճարումից ազատելով Հայաստանի Հանրապետություն կամավորական աշխատանք կատարելու նպատակով ժամանած և կամավորական աշխատանքի պայմանագիր ունեցող օտարերկրյա քաղաքացիներին:

6. Չարգացնել Հայաստան-ԵՄ համագործակցությունը ոչ-ֆորմալ կրթության բնագավառում և ներդնել եվրոպական լավագույն փորձը ոչ-ֆորմալ կրթության և շարունակական ուսումնառության բնագավառներում: